



Office in Yerevan



Հայաստանի Հանրապետության
բնապահպանության
նախարարություն



Հայաստանի
Հանրապետության
Լոռու
մարզպետարան

ՓՈՒՆԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԵԱՀԿ Երևանյան Գրասենյակի , Հայաստանի Հանրապետության
Բնապահպանության Նախարարության և Լոռու մարզպետարանի
միջև

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում

հասարակական բնապահպանական տեղեկատվության

կենտրոնի ստեղծման վերաբերյալ

Սույն Փոխըմբռնման հուշագիրը /այսուհետև Հուշագիր/ կնքվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի /այսուհետև ԵԱՀԿ/, ՀՀ բնապահպանության նախարարության /այսուհետև Նախարարություն/ և Լոռու մարզպետարանի /այսուհետև Մարզպետարան/ միջև, որոնք համատեղ կոչվում են «հիմնադիր անդամներ» կամ «կողմեր»;

Հիմնադիր անդամները կարևորելով ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի 1998թ. կոնվենցիայի /այսուհետև Օրհուսի կոնվենցիա>>/ կիրառումը:

Հիմնադիր անդամները ցանկանալով ընդլայնել Հայաստանում՝ Օրհուսի կոնվենցիայի իրականացման շրջանակները սերտորեն համագործակցելով շրջակա միջավայրի հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների /այսուհետև ՀԿ/ և Երևանում գտվող Օրհուսի հայկական կենտրոնի հետ /այսուհետև Օրհուսի հայկական կենտրոն/

Հիմնադիր անդամները որոշեցին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում հիմնել Հասարակական բնապահպանական տեղեկատվության կենտրոն /այսուհետև կենտրոն/

Հոդված 1

ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կենտրոնը պետք է աջակցի հասարակության համար բնապահպանական տեղեկատվության առավել մատչելի դարձնելուն և այդ ոլորտում որոշումների կայացմանը հասարակության մասնակցության խթանմանը և արդարադատության մատչելիությանը: Կենտրոնը նաև պետք է նպաստի բնապահպանական հարցերում հասարակության համար թափանցիկ միջավայրի ստեղծմանը:

Հոդված 2

Կենտրոնի տեղադրման վայրը

Կենտրոնը հիմնվում է Լոռու մարզի Վանաձոր քաղաքում Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի Վանաձորի մասնաճյուղի շենքում /Արույան փ-ի 1.64

Հոդված 3

ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կենտրոնի խնդիրներն են.

-նպաստել Հայաստանում բնապահպանական քաղաքականության մշակման և կիրառման ոլորտում մարզային իշխանությունների և հասարակական կազմակերպությունների միջև կայուն հարաբերությունների հաստատմանը

-խթանել մարզի բնապահպանական կազմակերպությունների և նրանց հավանական գործընկերներ՝ տեղական, միջազգային և օտարերկրյա հասարակական կազմակերպությունների միջև կապի հաստատմանը

-ծառայել իբրև հիմք բնապահպանական հարցերով զբաղվող մարզի հասարակական կազմակերպությունների միջև կոալիցիայի ստեղծման համար:

- **ՎԵՐՈԳՐՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**

Բնապահպանական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին և այլ շահագրգիռ անձանց ապահովել բնապահպանական գրականությունից, ինտերնետից, Բնապահպանության նախարարության և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունից անվճար օգտվելու հնարավորություն

Տարածել բնապահպանական խնդիրներին առնչվող տեղեկատվություն և այն մատչելի դարձնել հասարակության համար

Խթանել բնապահպանական խնդիրների շուրջ հասարակական քննարկումները , դրանով իսկ նպաստելով հասարակության մասնակցությունը որոշումների կայացմանը:

Տրամադրել տարածք մարզպետարանի և Հայաստանի կառավարական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար՝ բնապահպանության ոլորտում հասարակության հետ աշխատանքների ապահովման համար: Աջակցել արդարադատության մատչելիության վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը:

Կենտրոնը, նրա հզորությունները և գործունեությունը ազատ և հավասար մատչելի են բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում ֆիզիկական անձանց, հասարակական կազմակերպությունների, ընկերակցությունների, գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների համար:

Կազմակերպել սեմինարներ, կլոր սեղաններ, մամուլի ասուլիսներ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Յուրաքանչյուր շահագրգիռ կողմ խրախուսվում է՝ ընդգրկելու Կենտրոնի գործունեությունը իրազեկության բարձրացմանն ուղղված իր ծրագրերում և օգտագործելու Կենտրոնի գործունեության ծրագիրը որպես շրջանակ դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար:

Հոդված 4

Կենտրոնի կառուցվածքը

1. Փորձագետների խորհուրդ

Հիմնադիր անդամները Հուշագիրը ստորագրելուց հետո պետք է ստեղծեն Փորձագետների խորհուրդ:

Փորձագետների խորհուրդը սկզբնական փուլում կազմված է պետական կառույցների հինգ և համապատասխան ոլորտներում՝ բնապահպանության, բիզնեսի, մամուլի և այլ ոլորտներում գործող ՀԿ-ների հինգ փորձագետներից:

Փորձագետների խորհուրդը պետք է կատարի հետևյալ գործառույթները.

1. Կենտրոնի գործառնության կառավարում, ներառյալ առօրյա որոշումների կայացումը Կենտրոնին տրամադրվող միջոցների օգտագործման վերաբերյալ
2. Կենտրոնի Կանոնակարգի, խորհրդանշանի և գործունեության տարեկան ծրագրի կազմում և հաստատում: Փորձագետների խորհուրդը պետք է մշակի կենտրոնի կանոնակարգը Կենտրոնի գործունեության առաջին երկու ամիսների ընթացքում: Կենտրոնի կանոնակարգը պետք է նկարագրի կենտրոնի գործունեությունը, Փորձագետների խորհրդի կազմի ձևավորման ընթացակարգերը և որոշում կայացնելու ընդհանուր մեխանիզմները: Կենտրոնի կանոնակարգը կարող է փոփոխվել Փորձագետների խորհրդի որոշմամբ
3. Կենտրոնի գործունեության տարեկան ծրագրի իրագործման ապահովում
4. Կենտրոնի գործունեության մասին տարեկան զեկույցի նախապատրաստում
5. Կենտրոնի և մարզպետարանի, Բնապահպանության նախարարության ու այլ մարմինների/մասնավորապես Օրիուսի հայկական կենտրոնի/ միջև տեղեկատվության փոխանակում
6. Գիտնականների, կառավարական հաստատությունների, հասարակական և առևտրային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների և այլ շահագրգիռ անձանց ուշադրության հրավիրումը Կենտրոնի գործունեությանը
7. Կենտրոնի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում
8. Սույն Հուշագրի 1-ին հավելվածով նախատեսված Փորձագետների խորհրդի անդամներին վերագրած գործառնական պարտականությունների իրագործում: Վերոգրյալ գործառույթները կատարում են Փորձագետների խորհրդի անդամները անհատույց: Խորհուրդը կարող է օգտագործել Կենտրոնը պարբերական հանդիպում

ների և հանրային միջոցառումների անցկացման համար՝ հասարակական ուշադրությունը կենտրոնին բևեռելու համար:

Փորձագետների խորհուրդը նիստեր է հրավիրում առնվազն ամիսը մեկ անգամ:

Հոդված 5

Կողմերի ներդրումներն ու պարտականությունները

1. ԵԱՀԿ պարտականությունները

Կենտրոնի գործունեության առաջին տարվա ընթացքում ԵԱՀԿ-ն հոգալու է հետևյալ ծախսերը:

- Կենտրոնի վերանորոգում և կահույքի ձեռք բերում
- հիմնական տեխնիկական սարքավորումների՝ համակարգչի, տպիչի ձեռք բերում
- Կենտրոնի գրադարանի համար գրքերի և նյութերի սկզբնական հավաքագրում
- Կենտրոնի ինտերնետային էջի ստեղծում
- Կենտրոնի գործունեության առաջին տարվա ընթացքում ինտերնետային կապի ապահովում, գրենական պիտույքների ապահովում
- Կենտրոնի սկզբնական ներկայացուցչական/գովազդային միջոցառումների կազմակերպում:

Կենտրոնի գործունեության առաջին տարվա ընթացքում մարզպետարանի փոխարեն վճարում է Կենտրոնի տեղացի մասնագետի հոնորարը:

Համակարգողը պատասխանատու է Կենտրոնի ամենօրյա աշխատանքն ապահովելու և Տեխնիկական առաջադրանքով սահմանված պարտավորությունները կատարելու համար:

Բնապահպանության նախարարության հետ խորհրդակցելով մարզպետարանը աշխատանքի է ընդունում Կենտրոնի տեղացի համակարգող մասնագետին և նրա հետ պայմանագիր է կնքում որպես անմիջական գործատու:

Համակարգողն աշխատում է մարզպետարանի և փորձագետների խորհրդի ենթակայության և պատասխանատվության ներքո: ԵԱՀԿ-ն ոչ մի դեպքում պատասխանատու չէ Կենտրոնը համակարգող տեղացի մասնագետի համար:

Կենտրոնի գործունեության առաջին տարվա համար վերը նշված ծախսերը չպետք է գերազանցեն 4000 /չորս հազար/ եվրոն:

2. Մարզպետարանի պարտականությունները

Մարզպետարանը Կենտրոնին անհատույց կտրամադրի տարածք՝ հոգալով Կենտրոնի էլեկտրաէներգիայի, ջեռուցման և ընթացիկ պահպանման ծախսերը:

Մարզպետարանը պատասխանատվություն է կրում Կենտրոնի գույքի համար պատշաճ կերպով հոգալու, պահպանելու, խնամելու և դրա ապահովությունն ու անվտանգությունը ապահովելու համար: Մարզպետարանը պետք է ապահովի, որ ԵԱՀԿ-ի կողմից տրամադրված կամ ֆինանսավորված սարքավորումներն ու այլ իրերը օգտագործվեն բացառապես կենտրոնի գործառնությունների համար:

Գույքի ցանկացած կորստի, հափշտակության կամ վնասվելու դեպքում Փորձագետների խորհուրդը պետք է տեղեկացնի Օրհուսի հայկական կենտրոնի խորհրդակցական խորհրդին՝ համապատասխան լուծում գտնելու համար:

3. Բնապահպանության նախարարության պարտականությունները

- Օրհուսի Կոնվենցիայի դրույթների համաձայն տրամադրվում է բնապահպանական տեղեկատվություն,
- միջնորդ է հանդիսանում Կենտրոնի և պետական այլ կառույցների և կազմակերպությունների միջև,
- թույլ է տալիս անհատույց օգտվել շրջակա միջավայրին վերաբերող գրականություն

նից,ինտերնետից, ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվությունից,օրենսդրությունից, կանոնակարգերից և այլն:

Հոդված 6 Սարքավորումները և այլ իրերը

Կենտրոնի գործառնությունների իրականացման նպատակով ԵԱՀԿ-ի կողմից ձեռք բերված կամ ֆինանսավորված սարքավորումների և այլ իրերի սեփականության իրավունքը պետք է փոխանցվի Կենտրոնին` 2-րդ հավելվածում սահմանված կարգով:

Հոդված 7

Մարզպետարանը և Նախարարությունը պետք է իրենց հաշվին երաշխավորեն,ապա հովեն և պաշտպանեն ԵԱՀԿ-ի,նրա ածխատակիցների և ԵԱՀԿ-ի համար ծառայություններ մատուցող անձանց անձեռնմխելիությունը`սույն Հուշագրից ծագող կամ դրա հետ կապված բոլոր կարգի մեղադրանքներից,հայցերից,պահանջներից և ցանկացած բնույթի և տեսակի պատասխանատվությունից:

Հոդված 8

Գովազդումը

Կենտրոնի հետ կապված ցանկացած տպագիր նյութում,իսկ հնարավորության դեպքում հրատարակություններում,զեկույցներում և մամլո հաղորդագրություններում կամ նմանատիպ ցանկացած միջոցներում պետք է նշվի Կենտրոնի գործունեությանը ԵԱՀԿ ցուցաբերած աջակցության մասին:

ԵԱՀԿ անունը և խորհրդանիշը կարող են օգտագործվել միայն սույն Հուշագրի հետ անմիջականորեն առնչվող նյութերում`նախօրոք համաձայնեցնելով ԵԱՀԿ-ի հետ:

Հոդված 9

Սույն Հուշագրի կատարմանն առնչվող հաղորդագրությունը պետք է տեղի ունենա հետևյալ հասցեների օգնությամբ.

ԵԱՀԿ-ի կողմից`ԵԱՀԿ երեւանյան գրասենյակ

Հաղորդակցության պատասխանատու`

Ծրագրի ղեկավար` Ժաննետ Քլոտցեր

-Հասցե` Երևան,Տերյան 89

-Հեռ./37410/545845,541064

-Տելեֆաքս`/37410/561138

-Էլ-փոստ` Jkloetzer@osce.am

Նախարարության կողմից

Հաղորդակցության պատասխանատու

Միջազգային համագործակցության

վարչության պետ`Ռուզան Դավթյան

-Հասցե` 375010,Երևան

Հանրապետության հրապարակ,

Կառավարական 3-րդ շենք

-Հեռ./37410/585349

-Տելեֆաքս/37410/585469

Մարզպետարանի կողմից

Հաղորդակցության պատասխանատու`

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ` Վոլոդյա Բունիաթյանը

հասցեն` Վանաձոր 377200 Հայքի հրապարակ

h.11, Հեռախոս՝(0322)43099, ֆաքս՝(0322)20413, 02877

Հոդված 10

Արտոնությունները և անձեռնամխելիությունը

Սույն հուշագիրը կամ դրան առնչվող ոչ մի բան չի համարվում ԵԱՀԿ և նրա աշխատակիցների արտոնությունների և անձեռնամխելիության սահմանափակում:

Հոդված 11

Տարածայնությունների լուծումը

Սույն Հուշագրի մեկնաբանման հետ կապված ցանկացած տարածայնություն լուծվում է հիմնադիր անդամների միջև խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 12

Ռեժի մեջ մտնելը և փոփոխումը

Սույն Փոխըմբռնման հուշագիրը և նրա անբաժանելի մաս հանդիսացող երկու հավելվածները, ուժի մեջ են մտնում Կողմերի ստորագրման պահից և շարունակում է գործել Կենտրոնի գործունեության ողջ ընթացքում, եթե Կողմերից մեկը չի ցանկանում դադարեցնել այն ավելի վաղ՝ առնվազն 30 օր առաջ գրավոր ծանուցելով այդ մասին:

Սույն հուշագրի ցանկացած փոփոխություն ենթակա է Հիմնադիր անդամների կողմից գրավոր կերպով հաստատման:

Կազմված է Երևան քաղաքում 2005թ հոկտեմբերի 6-ին, անգլերեն և հայերեն լեզուներով, որոնք երկուսն էլ հավասարազոր իրավական ուժ ունեն:

Հուշագրի դրույթների մեկնաբանման հետ կապված տարածայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերենին:

**ԵԱՀԿ երևանյան
գրասենյակ**

**ՀՀ բնապահպանության
նախարարություն**

**ՀՀ Լոռու
մարզպետարան**

**Գրասենյակի ղեկավար,
Դեսպան՝**

**ՀՀ բնապահպանության
նախարար՝**

ՀՀ Լոռու մարզպետ

Վլադիմիր Պոյախին

Վարդան Այվազյան

Հենրիկ Քոչինյան

